ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՌՈՒՇԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 233 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-6-ՐԴ ԿԵՏԵՐԻ, 2-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ, ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ԳՅՈԶԱԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 223 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ, 231 ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 29.1. ՀՈԴՎԱԾԻ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՌՈՒԲԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ, ՀՐԱՉ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ՄԻՔԱՅԵԼ, ՄԱՐԻԵՏՏԱ ԵՎ ՄԱԴԼԵՆԱ ԲԱԲԱԼՅԱՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 404 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԻ /28.11.2007թ. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ՝ 404 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ/ ԵՎ ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 13 ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը ՈՐՈՇԵՑ.

1. Հաշվի առնելով, որ «Քաղաքացի Հովհաննես Ռուշանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 3-6-րդ կետերի, 2-րդ և 4-րդ մասերի», «Քաղաքացի Գևորգ Գյոզալյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 231 հոդվածի 2-րդ մասի և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածի», «Քաղաքացիներ Ռուբեն Մանուկյանի, Հրաչ Վարդանյանի, Միքայել, Մարիետտա և Մադլենա Բաբալյանների դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 1-ին մասի, 1-ին մասի 1-ին կետի և 3-րդ կետի /28.11.2007թ. խմբագրությամբ՝ 404 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի/ և ՀՀ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերը վերաբերում են նույն հարցին և նշված գործերով վիճարկվում են նորմատիվ ակտերի միևնույն հարցին (հավատարմագրված փաստաբանության ինստիտուտին) վերաբերող նորմերը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածի՝ նշված գործերը միավորել և քննել դատարանի նույն նիստում, նաև հաշվի առնելով գործին առնչվող լրացուցիչ նյութերի ուսումնասիրման անհրաժեշտությունը՝ միավորված գործի դատաքննությունն սկսել 2008 թվականի հոկտեմբերի 7-ին, ժամը 11.00-ին, և գործի դատաքննությունն անցկացնել բանավոր ընթացակարգով։

2. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 5-րդ մասի՝ գործով զեկուցողներ նշանակել սահմանադրական դատարանի անդամներ Վ. Հովհաննիսյանին և Հ. Նազարյանին։

3. Այս կապակցությամբ ուժը կորցրած ճանաչել ՀՀ սահմանադրական դատարանի 10.06.2008թ. ՍԴԱՈ-54 որոշման 3-րդ կետը և 01.07.2008թ. ՍԴԱՈ-57 աշխատակարգային

որոշման 1-ին կետի «…ինչպես նաև գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով» մասը և 2-րդ կետը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

8 հուլիսի 2008 թվականի
ՍԴԱՈ-60